

# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

## ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏՅԱՆ

### ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՅԱՆԻՆ

Կեսարիայի հայոց հոգեւոր առաջնորդ Տրդատ եպիսկոպոս Պալյանին եւ նրա զիտական-գրական վաստակը գնահատողներից է պատմաբան, բանասեր եւ հասարակական գործիչ Ա. Ալպոյաճյանը (1879-1962)<sup>1</sup> :

Ա. Ալպոյաճյանը, որ 1908-10 թվականներին Ս. Փրկիչ Ազգային հիվանդանոցի, «Ընդարձակ օրացոյց»ի՝ կազմող-խմբագիրն է եղել, առաջարկել է Պալյանին «Հայ վանորայք»ի հրատարակության պատրաստ հատվածները զետեղել օրացույցի մեջ: Այդ մասին տեղեկանում ենք Պալյանի նամակներից<sup>2</sup>:

Տրդատ եպիսկոպոս Պալյանի եւ իր կրտսեր ժամանակակից ու հայրենակից Արշակ Ալպոյաճյանի միջեւ նամակագրությունն<sup>3</sup> սկսվել է 1905 թվականից, եւ ըստ պահպանված նամակների ժամանակագրության, շարունակվել մինչեւ 1913 թվականը<sup>4</sup>: Մաշտոցյան Մատենադարանում Ա. Ալպոյաճյանի թողոնի մեջ բարեբախտաբար պահպանվել են այդ նամակները, ինչպես նաեւ այլ նյութեր՝ ուղղակի կամ անուղղակի կապված Տրդատ եպիսկոպոս Պալյանի կենսագրության եւ բազմաժանր գործունեության հետ:

Նամակներից առաջինը ամբողջությամբ պատասխանն է Ս. Կարապետ վանքի վարժարանի ֆրանսերենի ուսուցչի թափուր պաշտոնում հարմար մեկին գտնելու՝ Ս. Պալյանի խնդրանքին. «...ուրախ կըլլամ եթէ շատ ազնիւ, բարի, յարմարող ու համեստ բնատրութեամբ զաւտացի մէկը գտնէք, որպէս զի կարողանայ կենակցել մեր վարժարանի այժմեայ զաւառացի դասատուներու հետ»<sup>5</sup>: Սակայն թեկնածուն, որ Միհրան Հովհաննիսյանն<sup>6</sup> էր, մի շարք պատճառներով այնքան էլ չէր համապատասխանում առաջադրված պահանջներին, եւ Պալյանը 1905 թ. հոկտեմբերի 5-ի նամակով տեղեկացնում է, որ ֆրանսերենի ուսուցչի հարցն արդեն լուծված է: Երկու նամակ՝ գրված 1906, 1907 թթ. (թղթ. 52, վավ. 66/97, 66/102) շատ վատ են պահպանված, գրեթե անընթեռնելի են, տեղ տեղ երեւում են միայն առանձին բառեր: Հրատարակության պատրաս-

անելու համար յոթ մամակներից ընտրել ենք չորսը, որոնք վերաբերում են Կեսարիայի Ս. Կարապետ վանքի առաջնորդների ցանկին, Կեսարիայի եւ զաղթավայրերի հայկական վանքերին եւ հայերեն հնատիպ գրականությունը:

Ա. Ալպոյաճյանի հետաքրքրության շրջանակները այդ տարիներին նույնպես հաճախ համընկնում էին առաջնորդի զբաղումներին, եւ այդ ընթացքում առաջացած հարցերին պատասխաններ գտնելու համար նա դիմել է Տ. Պալյանին:

Կետադրությունը ճշտված-լրացված է: Ընդգծումները հեղինակին են:

Հրապարակվում են առաջին անգամ:

1.

Կ. Պոլիս, 17/30 Հոկ. 1905

Գերապատիւ Տ. Տրդատ եպս. Պալեան

ի Կեսարիա

Ձեր Գերապատության 5 Հոկ. 1905 թուակիր պատուական գրութիւնը այսօր իսկ ընդունած եմ եւ բովանդակութեանը տեղեկացած:

Արդէն լրագրական հրատարակութիւններէ տեղեկացած էի Ս. Կարապետի վանքին վարժարանին ֆրանսերէնի ուսուցիչ մը անուանուած ըլլալը: Առաջիկային ուրիշ առթիւ մը եթէ պատեհութիւնը ներկայանայ դարձեալ պատրաստ ենք ջանադիր ըլլալու Ձեր Սրբազնութեան հրամանները կատարելու:

Այս առթիւ ներփակեալ կը դրկեմ Ձեր Սրբազնութեան Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին Առաջնորդներու մեր կազմած ցուցակը, ինչպէս նաեւ Ս. Դանիէլ, Ս. Սարգիս եւ Թովարզայի վանքերուն վանահայրներէն մեզի ծանօթներուն ցանկերը: Անոնց անկատար եւ շատ պակասատր ըլլալը ինձի համար անծանօթ իրողութիւն մը չէ եւ ասիկա շատ բնական բան մըն է, վասն զի ես առիթ չեմ ունեցած տեղական քննութեան, ինչպէս նաեւ մասնատր մպատակ մը չեմ ըրած ինձի համար Կեսարիոյ թեմը, այլ ընդհանրապէս բոլոր թեմերու համար հաւաքած եմ ինչ որ ինձի հանդիպած է մատենագրական աշխատութեանց կամ ձեռագիրներու յիշատակարանին մէջ:

Այդ աշխատութիւնը հազիւ եօթը տարուան գործ մըն է եւ ինչպէս որ Ձեր Սրբազնութեան ծանօթ է եօթը տարին զայն կատարելագործելու համար շատ անբաւական ժամանակ մըն է: Ինչպէս պիտի տեսնէք այս ցուցակին մէջ օգտուած եմ Ձեր Ձեռագիրներու ցուցակէն: Սիւայն Կեսարիոյ Հայ վանքերու վրայ Ձեր գրածներէն չեմ օգտուած (*Բիւզանդիոնի հրատարակած*)՝ վասն զի հոն յիշատակեալ անուններուն պաշտօնավարութեան թուականները ճշտուած չեն:

Կը յօսամ թէ Ձեր Գերապատուութիւնը մեր ցանկը ստանալէ յետոյ պիտի բարեհաճի անմախսանձաբար բարեհաճութիւնը ունենալու մեր պակասները լրացնելու իր հաւաքումներէն, զմեզ երախտապարտ թողլով:

Նոյնպէս մեծասլէս եւ անհունապէս շնորհակալ եւ երախտապարտ կըլլամ, եթէ Ձեր Սրբազնութիւնը բարեհաճի մաւոյ ուրիշ թեմերու համար ալ եթէ որեւէ նշանակեալ ցուցակներ կամ մօթեր ունի իմացնել, միշտ ի նկատի առնելով սա պարագան, թէ այդ սերմերը խոպան հողի վրայ նետուած սերմեր չպիտի ըլլան եւ պիտի գարծաժուին արդիւնատրապէս՝ որչափ որ մեր կարողութիւնը կը ներէ:

Կանխաւ շնորհակալութիւններով եւ միշտ համակրութեամբ մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ մնամ որդիական ակնածանօք միշտ

Արշակ Ա. Ալպօյաճեան

Յ. Գ. Յանկը ուշացնելուս համար ներողամիտ եղէք, պատճառը պարզապէս մօթերու տետրակէն դասաւորմամբ ընդօրինակելու աշխատութիւնն է, զոր իբր ժամերանայի գործ կը ծուլանայի ընել:

Նոյն

ՄՄ, Ա. Ալպ. թողուն, թղթ. 52, վաւ. 66/71, 2 թերթ

2.

Կ. Պօլիս. 24/8 1906

Գերապատիւ Տ. Տրդատ եպիսկոպոս Պալեան

Առաջնորդ Հայոց Կեսարիոյ

*Կեսարիա*

Բարձրաշնորհ Տէր.

Հուսկ ուրեմն Բիզանդիոնի 3073 թուին<sup>8</sup> մէջ կարդացի Ձեր Սրբազնութեան Կեսարիոյ առաջնորդաց ցանկը: Անցեալ հոկտեմբեր ամիսէն ի վեր անհամբեր կը սպասէի Ձեր Գերապատու[ու]թեան խոստումի գործադրութեանը, ինչ որ կ'ուշանար: «Լա՛ւ է անագան, քան երբեք» ըսուած է եւ ես այս ըսելով տարուան մը այս յապաղումի խնդիրը միանգամ ընդ միշտ կը փակեմ, հրատարակելու շնորհը ըրած ըլլալուն համար շնորհակալութիւններս յայտնելով:

Սիայն թէ քանի մը նշանակելի կէտեր կան, որոնց վրայ Ձեր Սրբազնութեան ուշադրութիւնը կը հրաւիրեմ:

1. Նախ Կեսարիոյ հայ ազգաբնակչութիւնը ԺԲ. դարու կամ անկէ քիչ առաջուան զարթականութի՛ւն մըն է, որ առաջնորդութիւնն ալ այսքան ուշ սկսած է: Նոյնպէս Ս. Կարապետի վանքը մո՞ր է աւելի, քան Ս. Մեկեղեքիտսի վանքը, զոր յիշատակած էիք:

Ասիկա լուսաբանութեան արժանի կէտ մըն է:



2. 1287ին եւ 1307ին *Կոստանդին եպ. Կեսարիոյ* կը յիշուի (տե՛ս - Չամ. Գ. հատ., էջ 284 եւ 309). ինչո՞ւ համար արդեօք դուրս ձգած էք այս անունը Չեր ցանկէն:

3. *Յովսէփի եպ. Աման օղլու - Սարնասխի* կը գրէք, թէ կը յիշուի 1693ին եւ 1705ին գրուած երկու ձեռագիրներու մէջ:

Այդ յիշատակարաններէն մէկը կարծեմ թէ, դարձեալ Չեր Սրբազնութեան հրատարակել տուած այս տարւոյն «Լոյս»ի 143 էջին մէջ հրատարակուածն է՝: Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ, թէ 1693ին գրուած յիշատակարանին մէջն ալ արդէ՞օք իբր ատաջնորդ յիշատակուած է: Վասնզի 1705ին անվիւթայ կերպով Առաջնորդ լինելը յայտնի է, սակայն միւսը ըստ իս կասկածելի, վասնզի պատճառներ կան տարակոյսի ենթարկող: 1702-1703 թուականներուն Յովսէփի վրդ. Աման օղլու ատաջնորդ է Թէքրի - տաղի, ինչպէս կը յիշատակէ իրմէն հազիւ կէս դար յետոյ ասպրող Հ. Սիքայէ վ. Չամիչեան իր հռահատոր գործին Գ. հատորին 744րդ էջին վրայ, ինչ որ Չեր Սրբազնութեան ուշադրութեանը կը ներկայացնեն:

Կը կարծեմ, թէ մինչեւ հիմա ստացած կ'ըլլաք Հանդէս Ամսօրեայի Յուլիս - օգոստոս ամսաթիւերը, ուրկէ պիտի տեսնէք, թէ *Սարգիս Սարաֆեան* պաշտօնավարած է ի Կեսարիա 1731-1735, ինչպէս իր կենսագրութենէն կ'երեւի, եւ որ կարծեմ վաւերական կրնայ համարուիլ:

Այս չորս կէտերուն վրայ եթէ հաճէք երկտողով մը բացատրութիւն մը տալ, իտրապէս երախտապարտ պիտի ձգէք զիս: Մանաւանդ - Յրդ - խիստ կը հետաքրքրէ զիս: Նոյնպէս Չեր մասնագիտութեանը վերաբերեալ խնդրոյ մը համար Չեր Գերապատու[ու]թեան աջակցութեանը կը կարօտիմ, կը յուսամ, թէ այս անգամ առանց տարւոյն մը խիստ երկար ժամանակամիջոցով մը ուշ պատասխանելու - փութով կը հաճէք պատասխանել:

Չամիչեան իր պատմագրութեան Գ. հատորին 105րդ էջին վրայ կը պատմէ, թէ Ընդհանրի մէկ նամակին վրայ Յունաց Մանուէլ կայսրը փափաք յայտնած է Արեւելք ճամբորդելով աստուածաբաններու ուղեկցութեամբ երթալ տեսնուելու Ընդհանրին հետ, սակայն Արեւմտեան սահմաններու շփաթութեան պատճառաւ չէ կրցած երթալ: Սակայն իր տեղը դրկած է Լիզիոն Մաստո Թէոքիանէ անուն երեւելի յոյն ախտուայծաբանը, իրեն հետ տալով նաեւ «*զհայր վանաց հայոց ի Փիլիպուպօլեաց [աշխարհի]ճ<sup>10</sup> գՅովհաննէս որոյ մականուն էր Ութման* (յամի տ[եառ]ն 1170)»:

Վանքերու համար Չեր ըրած հետազօտութիւններուն մէջ, անշուշտ, հանդիպած պիտի ըլլաք *վանքի մը յիշատակութեան, որ պէտք է անպատճառ զանուի կամ Կ. Պօլսոյ կամ Փիլիպպէի կամ Ռումէլի եւ Անատօլի* մի որ եւ մասին մէջ:

Ես, որչափ որ գիտեմ Անատոլուի մէջ Յունական կայսրութեան բաժին եղող երկիրներու մէջ երկու վանք կայ, երկուքն ալ օսմանեան տիրապետութենէն յետոյ շինուած՝ 1. Էնկիւրի եւ 2. Արմաշ, իսկ Ռումէլի կողմը հայ վանքի մը գոյութիւնը բացարձակապէս անծանօթ կը մնայ մեզի:

Եւրոպա աշխարհամասին մէջ մինչեւ Լեհաստան երթալու է երկու հույ վանքի հանդիպելու համար:

Հետեւաբար, Չեր Սրբազնութեան ձեռնահաստութեան կը թողում այս խնդրոյն լուսաբանութիւնը:

Եթէ կամ Ռումէլի կողմը ուրիշ վանքեր սղ, գէթ անունները իմացնելու շնորհը ընէիք:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ՝ մնամ Չերդ Գերապատու[ու]թեան խոնարի ծառան

Արշակ Ալպոյաճեան

Հասցես է՝

Արշակ Ալպոյաճեան

Գամանթօ խան ք. 12

Սթամպուլ

Կ. Պօլիս

ՍՄ., Ա. Ալպ. թողոմ, թղթ. 52 վաւ. 66/84, 3 թերթ

3.

23 մայիս, 12

Գերապատիւ Տ. Տրդատ եպ. Պալեան

Մանիսա

Նախ Գերապատիւ Սրբազնութեանդ առողջութիւնը հարցնելէ յետոյ ներկայիս կուգամ ստիպողաբար խնդրելու Չեր աջակցութիւնը կարեւոր գործի մը համար:

Չեր Սրբազնութիւնը իր յօդուածներուն մէջ թէ ի *Բիզանդիոնի*<sup>1/</sup> եւ թէ ի *Բանասէրի*<sup>2/</sup> կրկին անգամ հաւաստած է, թէ ունի իր ջովը Աբգարի Կ. Պոլիս տպագրած գիրքերէն մէկ օրինակ, որուն յիշատակարանն ալ հրատարակած է:

Արդ, կը խնդրեմ, որ այդ գիրքին մէկ էջը, կամ անոր լուսանկարը յանձնարարեալ ծրարով իմ հասցէիս խրկելու շնորհը ընէք: Լուսանկարելէ յետոյ անկորուստ կը վերադարձնեմ Չեզի, ապահով կրնաք ըլլալ:

Դարձեալ Չեր Սրբազնութենէն կը խնդրեմ, որ *Հայ տպագրութեան պատմութեան* մէջ Ջարբանէլեանի կողմէ իբր Աբգարեան տպագրութեանց նշանադրոշմ ներփակ նշանը իրապէս տեսած է՞ք Չեր ձեռքը եղած տպագիր գիրքին վրայ: Այս մասին Չեր լուսաբանութեան սպասելով անյապաղ, կանխապայտ շնորհակալութեամբ մնամ Գերապատիւ Սրբազնութեանդ խոնարի ծառայ



4.

Կ. Պոլիս 6/19 Յունիս 1913

Գերապատիւ Տ. Տրդատ եպ. Պալեան

Մանիսա

Հ[անդէս] Ամսօրեայի 1897ի Սեպ.ի թիւին մէջ Ձեր Մաշտոցներու վրայ գրած յօդուածին մէջ յիշած էք 1676ին ի Մարսիլիա տպուած *Մաշտոց* մը:

Արդ, զիտք թէ այս տպագրութիւնը քար զայթակդութեան եղած է բանասիրական աշխարհին մէջ, վասն զի 1676ին ըստ *ամենայնի* մնաց տպագրութիւն մ'ալ ի *Չմիւռնիա* կը յիշատակուի (տես Մատենագիտութիւն, Չարբանդեան էջ 400-2, Նոր մատենագիտութիւն, Հ. Ղազիկեան, էջ 1783-1785, նաեւ Թեոդիկի *Տիպ ու աստ, Աշխատանք*<sup>13</sup> եւ այլն): Արդ, փափաքելի է զիտնալ, թէ ոեւէ տարբերութիւն կա՞յ այս երկու տպագրութեանց միջեւ: Չմիւռնիա ապուածը՝ Հ. Ղազիկեան եւ Մարսիլիա ապուածն ալ Հ. Չարբանդեան տեսած կը թուին, եւ իրենց մէջ բերած յիշատակարաններէն դատելով կատարելապէս մնաց են իրարու. միայն իմ ուշադրութիւնս գրաւեց անոց *դիրքին ու մեծութեան* մասին եղած դիտողութիւն մը, որ շատ նշանակելի է: Հ. Ղազիկեան զիրքը կը նկարագրէ սապէս. «*Դիրք տպագրութեան 8. մեծ լայնեղեւ, խոշորագիր, բացի յառաջարանն եւ խորագիրներէն՝ որոնք միջակ գրով են. թուրք բանձր ու սեւ. հասարակ տպագրութիւն*»: Իսկ Թ. Ճերմակեան (Տես *Աշխատանք*, թ. 100) «*Փոքր Մաշտոց*» բացատրութիւնը կը գործածէ իր տրամադրութեան տակ գտնուած Մաշտոցին համար եւ յօդուածին շարունակութեան մէջ տեղ մը (*Աշխատանք*, թ. 103), *Արշալոյս Արարատեանի*<sup>14</sup> վկայութեան վրայ հիմնուած կը յայտնէ, թէ նոյն տպարանին մէջ «*Մեծ Մաշտոց*» մ'ալ տպուած է:

Ուրեմն, 1676ին *երկու* Մաշտոց տպուած է 'ի *Չմիւռնիա*, մին մեծ (Հ. Ղազիկեանի տեսածը) եւ միւսը վոքը (Թ. Ճերմակեանի տեսածը): Մարսիլիա տպուածը արդեօք լիթրադիո է, թէ՞ մեծադիր, զիտնալ հետաքրքրական է: Արդ, իբր տպագրութեան պատմութեան մեծապէս աշխատած եւ երկար պրպտումներով անոր կարգ մը գաղտնիքներուն քափանցած անձնատուրութիւն մը կարեւոր կը դատեն զիտնալ նաեւ Ձեր Գերապատութեան կարծիքը: Կը հաւատա՞ք, որ 1676ին Չմիւռնիա ալ իր տպարանը ունեցած ըլլայ<sup>15</sup>:

Հոս դիտել կուտամ, թէ *Մարսիլիոյ* եւ *Չմիւռնիոյ* տպարաններու առընչութիւնը շատ դուրին պիտի ըլլար հաստատել, եթէ 1675-76 թուականներուն տպուած *Գիրք արքութենից, Արեւստ համարողութեան, Գիրք վայելուի*<sup>16</sup>, *Գիրք Աշխարհաց*<sup>17</sup>, *Կանոնք զգուշութեամբ պահելոյ*

զանձն, Նուագարան Երանուհույ՝<sup>18</sup>, Գրքոյկ կարեւոր գործերուն՝<sup>19</sup> յիշատակարաններուն մէջ յիշուած ըլլային Մաշտոցին մէջ յիշուած անձերը, եւ կամ մանաւանդ 1676էն յետոյ Մարսիլիա տպուած կարծուած գիրքերուն մէջ Սողոմոնը եւ կամ մանաւանդ Աւետիսը եւ Մկրտիչը եւ այլն, յիշուած ըլլային: Դժբաղտաբար ինձի անձանօք է 1677ի Սաղմոսին յիշատակարանը, որ կը յօսամ, թէ կրնայ լուսաբանել այս խնդիրը: Մանաւանդ *հինգ տարուան* խորհրդաւոր լռութիւն մը կայ մէջտեղը 1677էն 1683, որմէ յետոյ դարձեալ ասպարէզ կուգայ Մարսիլիոյ տպարանը տպելով *Ալն հոգեկան, Պարտէզ հոգեւոր*, եւ *Ժամագիրք*<sup>20</sup>, որոնց յիշատակարաններուն մէջ չեն գիտեր թէ Սողոմոն, Աւետիս եւ այլք կը յիշուին, եւ կը բացատրեն իրենց հինգ տարուան լռութիւնը: Եթէ կը յիշուին, ուրեմն Մարսիլիայէն բնաւ հեռացած չեն եւ այս տպարանը շարունակուած է, իսկ *Ջմիռնիան կեղծիք մըն է*: Ասկայն ինչո՞ւ այդ կեղծիքը, ասիկա անձանօք կը մնայ: Եթէ այս մասին հաճիք լուսաբանութիւն մը տալ, զիս երախտապարտ պիտի թողուք:

Վերը յիշուած գիրքերէն ոմանց ճակատները կան մատենագիտութեան՝ մէջ, սակայն յիշատակարանները լրիւ չեն, այնպէս որ ինձի կարելի չեղաւ վճռական եզրակացութեան գալ:

Հաւաստի եմ, որ այս խնդիրը Չեզ հետաքրքրած է եւ անոր մասին որոշ կարծիք մը կազմած էք: Կրնա՞ք ըսել, թէ Դուք ի՞նչ կը կարծիք այս մասին: Եթէ բարեհաճիք երկտողով մը Չեր կարծիքը հաղորդել շատ երախտապարտ պիտի թողուք զիս<sup>22</sup>:

Մատչելով ի համբոյր ս. Աջոյդ՝ մնամ որդիական ակնածանօք

Արշակ Ա. Ալպօյաճեան

ՄՄ, Ա. Ալպ. թողոն, թղթ. 52, վաւ. 66/179, 2 թերթ

KARINE AVETYAN

## LES LETTRES ARCHAK ALBOYADJIAN TRDAT EVEQUE PALIAN

Dans les archives du Maténadaran de Machtots conservent sept lettres d'Archak Alboyadjian à Trdat évêque Palian. Nous avons choisi et nous avons préparé quatre lettres à édition, qui concernent des couvants du Césarée et la littérature arménienne incunabile.

Publient pour la première fois.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այդ կապակցութեամբ տե՛ս նրա «Պատմութիւն հայ Կեսարիոյ» երկհատոր հիմնարար աշխատության էջերը՝ 945-56, 976-1030, 1130-50 եւ այլն:
2. Պալյանի գրած վեց նամակները Ա. Ալպոյաճյանին հանձնված են տպագրության («Էջմիածին» ամսագիր, 2006, Ա):



3. Պահպանված նամակներից Տ. Պալյանի՝ 1905-1908 թթ. և Ա. Ալպոյաճյանի՝ 1905-1913 թթ. առաջին չորսն են՝ նամակ-պատասխան, մնացածները կամ չեն պահպանվել, կամ գուցե այլ հավաքածուների մաս են կազմում:
4. Ալպոյաճյանի նամակները (քերես պատճենները) գրված են քարակ թղթի վրա, տառերը խումացած և դժվար ընթեռնելի են:
5. ՄՄ., Ա. Ալպ. թողոմ, թղթ. 49, վառ. 66/2996, 1 թերթ:
6. Սիիրան Հովհաննիսյան (1855-1926), արևմտահայ գրող, եղել է ուսուցիչ, վարել տեսչական պաշտոններ, զբաղվել է գրական, քանասիրական ուսումնասիրություններով, հրատարակել է քանաստեղծական ժողովածուներ, ֆրանսերեն-հայերեն, հայ.-ֆրանս. քառարաններ, աշխատակցել է Փարիզի «Բանասեր», Կ. Պոլսի «Ծաղիկ» հանդեսներին, ունի անտիպ աշխատություն հայ բողոքականության ծագման մասին:
7. «Բիզանդիոն» լրագիր, Կ. Պոլիս, 1901, հմր 1360, 1375, 1376:
8. Տե՛ս Առաջնորդական յաջորդությունը Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց, «Բիզանդիոն», 1906, հմր 3073, էջ 1: Հմտ. լրացված, ընդարձակ տարբերակը «Հայ վանորայք», Չմյոտմիա, 1914, էջ 31-65:
9. Նկատի ունի «Եկեղեցական ձեռագիրք Կեսարիոյ վիճակին վանորէից, Ս. Եկեղեցեաց և անհատից սեփական: Գ. Թալուտունի Ս. Թորոս եկեղեցիին».
- հոդվածը տե՛ս «Լոյս», 1906, էջ 143-44:
10. Բնագրում՝ աշխարհի նշանագիրը:
11. «Բիզանդիոն», 1905, թիւ 2560, էջ 1:
12. «Բանասեր», Փարիզ, 1903, էջ 203-207:
13. «Աշխատանք»՝ Լրագիր հասարակական, տնտեսական, քաղաքական: Չմիտմիա, 1910--1914: Տէր և տնօրէն՝ Ս. Թորանեան, 4 էջ:
14. «Արշալոյս Արարատեան»՝ օրագիր քաղաքական, քանասիրական և առնետրական, Չմիտմիա, 1840-1887: Հրատարակիչ՝ Ղ. Պալղազարեան, խմբագիր՝ Յարութիւն Սվաճեան:
15. Պալյանը հակված է կարծելու, որ 1676ին Չմյոտմիայում տպարան չի եղել, այլ միայն 1759ին է հաստատվել տպարան, որտեղ մինչև-1762 թ. հրատարակվել է երեք գիրք, որից հետո մինչև 1834 թ. ավելի քան յոթանասուն տարի որեւէ տպարանի հիշատակություն հայտնի չէ: 1835ից արդեն հիմնվում է տպարան և տպագրական գործը զարգանում է Չմյոտմիայում: Տե՛ս Հայ մամուլ Չմիտմիոյ մէջ 1676-1850, «Դաշինք», Զաղաքական և գրական օրաթերթ, Չմիտմիա, 1909-1919, Արտօճատէր Հրանտ Մամուրեան, խմբ.՝ Սուրէն Պարթեւեան: 1911, հմր 688, էջ 1-2:
16. Գրքի լրիվ վերնագիրն է՝ «Գիրք վայելույ և հարկատր համուրց», Մարսէլ, 1675:
17. Այս վերնագրով գիրք հրատարակուել է 1668 թվականին և ոչ Սարսելում, այլ Ամստերդամում, Ոսկան Երևանցու տպարանում: Տե՛ս «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության մեջ, էջ 55:
18. Գրքի լրիվ վերնագիրն է՝ «Նուագարան Երանուիւոյ կուսին Մարիամոս», Մարսէլ, 1676:
19. Գրքի ստույգ վերնագիրն է՝ «Գրգուկ կարետր համապագորդեան», Մարսէլ, 1676:



20. 1683-ին Մարսելում տպագրված գրքերից երրորդը ունի հետևյալ վերնագիրը՝ «Մովսես Խորենացի, Աշխարհացոյց: - Աղուիսագիրք: - Համառոտ վիպասանութիւն», այլ ոչ «Ժամագիրք»: Տե՛ս Հայ գրքի մատենագիտություն, հատոր Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988, էջ 88:
21. Նկատի ունի Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի» գիրքը, Վենետիկ, 1909:
22. Տարիներ անց Ա. Ալադյաճյանը այս հարցին կրկին անդրադարձել է «Կրկնուած սխալներ» հոդվածով (Տե՛ս «Ընդարձակ տարեցոյց Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի», 1930, էջ 294-305), որտեղ փորձում է պատասխանել իր առաջադրած հարցին՝ բացատրելով այդ հանգամանքը հայերի տպագրական գործունեության դեմ կաթոլիկ հոգևորականության և ֆրանսիական կառավարության հարուցած հալածանքներով: